Նախագիծ

Արձանագրային

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացության նախագծի մասին

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացության նախագծին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով։

Էդվարդ Նալբանդյան

Նախագիծ
Պ-824-15.02.2010-ԱՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասինե 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-123-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետեւ՝ Օրենք) հոդված 28-րդը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Վավերացման փուլում միջազգային պայմանագրի վերաբերյալ վերապահումը եւ (կամ) հայտարարությունը սահմանում են Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Ազգային ժողովը։»։

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 31.1 հոդվածով.

«*Հոդված 31.1 Մինչեւ ուժի մեջ մտնելը միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից չեղյալ հայտարարելը*

1. Մինչեւ ուժի մեջ մտնելը միջազգային պայմանագիրը, դրա կնքման ցանկացած փուլում Հայաստանի Հանրապետության կողմից կարող է միակողմանիորեն չեղյալ հայտարարվել, եթե պայմանգրի մյուս կողմն հայտարարում է այնպիսի նախապայմանների մասին կամ ձեռնարկում է այնպիսի գործողություններ, որոնք անհամատեղելի են պայմանագրի առարկայի եւ նպատակների հետ կամ այդպիսին կդառնան հետագայում, կատարել է խարդախություն, կաշառել է Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին, ուժի կամ դրա կիրառման սպառնալիքի միջոցով գործադրել է հարկադրանք կամ անհիմն խախտել է պայմանագրի կնքման ընթացակարգերին առնչվող ժամկետները։

2. Մինչեւ ուժի մեջ մտնելը միջազգային պայմանագիրը, դրա կնքման ցանկացած փուլում Հայաստանի Հանրապետության կողմից կարող է միակողմանիորեն չեղյալ հայտարարվել նաեւ, եթե այն կնքելու ընթացքում չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության սահմանադրության եւ սույն օրենքի պահանջները։

3. Մինչեւ ուժի մեջ մտնելը միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից չեղյալ են ճանաչում սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված մարմիններըե։

Հոդված 3. Օրենքի 42-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Հայկական կողմը միջազգային պայմանագիրը վավերացնում կամ հաստատում է վերապահումով (հայտարարությամբ), եթե

1) մինչեւ երկկողմ միջազգային պայմանագրի վավերացումը կամ հաստատումը մյուս կողմը կատարել է այնպիսի վերապահում կամ հայտարարություն, որը հակասում է միջազգային իրավունքի նորմերին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը կամ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշմանը,

2) դրանում ամրագրված դրույթները ձեւակերպված են ոչ պարզ, ոչ հստակ եւ ոչ մատչելի լեզվով, օգտագործված են հնացած, բազմիմաստ բառեր, արտահայտություններ, պատկերավոր համեմատություններ, այլաբանություններ, չափազանցություններ, փոխաբերական իմաստով բառեր կամ արտահայտություններ, որոնք պայմանագրի մյուս կողմի համար տվյալ պահին կամ հետագայում կարող են դառնալ պայմանագրի իրական առարկային կամ նպատակներին ուղակիորեն չվերաբերող մեկնաբանման կամ այդպիսի մեկնաբանմամբ պայմանագրի կիրառման հիմք,

3) իրավական նորմի որոշակիության եւ միջազգային իրավունքին համապատասխան մեկնաբանության ապահովման համար անհրաժեշտ է հստակեցնել պայմանագրի առարկան եւ նպատակը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները,

4) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվող քայլերը պետք է ներդաշնակ լինեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշմանը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին։

Սույն մասի առաջին կետում նշված դեպքում հայկական կողմը կարող է վերապահումը ձեւակերպել որպես մյուս կողմի վերապահման կամ հայտարարության դեմ առարկություն։ Եթե այս ձեւով վավերացնելը կամ հաստատելը ըստ էության անհամատեղելի է պայմանագրի առարկայի եւ նպատակների հետ, ապա հայկական կողմը այդ պայմանագիրը կարող է վավերացնել կամ հաստատել միայն այն դեպքում, երբ մյուս կողմը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, հանել է նման վերապահումը կամ հայտարարությունըե։

Հոդված 4. Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ կետ.

«4) միջազգային պայմանագրի գործողության ընթացքում ի հայտ են եկել սույն օրենքի 31.1 հոդվածով նախատեսված համապատասխան հիմքերը։ե

Նույն մասում «2-րդ եւ 3-րդե բառերը փոխարինել «2-րդ, 3-րդ եւ 4-րդե բառերով։

Հոդված 5. Օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել նաեւ, եթե ողջամիտ ժամկետում չեն վերացել միջազգային պայմանագրի կասեցման հիմքերը։ե

Հոդված 6. Սույն օրենքի դրույթները կիրառվում են նաեւ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքման համապատասխան փուլում գտնվող միջազգային պայմանագրի նկատմամբ։

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Նախագիծ
Պ-824[1]-15.02.2010-ԱՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Ազգային ժողովի կանոնակարգե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգե 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ 308 Հայաստանի Հանրապետության օրենքի 93-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Միջազգային պայմանագիրը կարող է վավերացվել Հանրապետության նախագահի կամ Ազգային Ժողովի կողմից սահմանված վերապահումով եւ (կամ) հայտարարությամբ։ե

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Օրենսդրական նախագծերի փաթեթը նպատակ ունի հստակեցնել եւ ՀՀ կողմից միջազգային պայմանագրերի կնքման ընթացակարգը համահունչ դարձնել ինչպես միջազգային իրավունքին, այնպես էլ ՀՀ սահմանադրությանը։

Նախագծերով առաջարկվում է՝

1. Հայաստանի Հանրապետությանը վերապահել իրավունք, որի համաձայն միջազգային պայմանագրերի կնքման ընթացքում, կնքման որեւէ փուլում, քանի դեռ միջազգային պայմանագրիրն ուժի մեջ չի մտնել, ՀՀ-ն իրավունք ունենա միակողմանիորեն չեղյալ հայտարարել պայմանագրային գործընթացը։ Օրենսդրական այս բացը, ներկայումս ըստ էության ՀՀ-ին (ի դեմս պայմանգիրը հաստատող կամ վավերացնող մարմնի) զրկել է այդպիսի իրավունքից, քանի որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են սահմանադրությամբ կամ օրենքով։ Մինչդեռ Հայաստանի անկախության մասին հռչակագրի 6-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, ՀՀ սահմանադրության 9-րդ հոդվածի ուժով ՀՀ արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան։ Իսկ միջազգային իրավունքը, մասնավորապես Վիենայի 1969 թվականի միջազգային պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիան, առանձին բացառություններով չի արգելում պետության կողմից մինչեւ պայմանագրի ուժի մեջ մտնելը միակողմանիորեն չեղյալ ճանաչելու հնարավորությունը (ստորագրությունը հետ կանչելը, հաստատված կամ վավերացված պայմանագիրը, մինչեւ դրա գործողության մեջ մտնելը վերացնելը եւ այլն)։ Այլ կերպ ասած. ամրագրելով

առաջարկվող նորմը՝ ՀՀ-ն իր արտաքին քաղաքակնության շրջանակներում վարվող բանակցությունների, ինչպես նաեւ կնքվող համաձայնությունների մեջ կլինի ավելի ճկուն։ Բացի այդ, առաջարկվում է նշել այն հիմքերը, որոնք իրավունք կտան ՀՀ-ին դրսեւորելու այդպիսի վարքագիծ։ Մասնավորապես՝ երբ պայմանգրի մյուս կողմն հայտարարում է այնպիսի նախապայմանների մասին կամ ձեռնարկում է այնպիսի գործողություններ, որոնք անհամատեղելի են պայմանագրի առարկայի եւ նպատակների հետ կամ այդպիսին կդառնան հետագայում, չնայած նրան, որ բանակցությունների ընթացքում չեն եղել այդպիսի պայմանավորվածություններ։ Կամ պայմանագրի մյուս կողմը կատարել է խարդախություն, կաշառել է Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին, ուժի կամ դրա կիրառման սպառնալիքի միջոցով գործադրել է հարկադրանք կամ անհիմն խախտել է պայմանագրի կնքման ընթացակարգերին առնչվող ժամկետները կամ թույլ է տվել ողջամիտ ժամկետների չարաշահում (ձգձգում) կամ երբ միջազգային պայմանագրի կնքման ընթացքում չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության սահմանադրության եւ օրենքի պահանջները։ Ընդ որում, այս հիմքերից շատերը Վիենայի կոնվենցիայով (հոդվածներ 46-53) կարող են հիմք հանդիսանալ գործողության մեջ գտնվող պայմանագրի անվավերության համար։ Հետեւաբար տրամաբանական եւ էական է այդպիսի հնարավորության ընձեռումը մինչեւ պայմանագրի ուժի մեջ մտնելը։

Բացի այդ, առաջարկվում է նաեւ լրացնել ուժի մեջ մտած միջազգային պայմանագրի կասեցման կամ դադարեցման հիմքերը, որոնք առավել համահունչ կլինեն միջազգային իրավունքին եւ ՀՀ սահմանադրությանը։

2. նախատեսել Հայաստանի կողմից միջազգային պայմանագրի հաստատման կամ վավերացման ժամանակ վերապահում անելու հիմքերը։ ՀՀ ներկա օրենսդրությամբ վավերացման ժամանակ վերապահում անելու իրավունքն ու դեպքերը խիստ սահմանափակված են։ Մինչդեռ, Կոնվենցիան ոչ միայն խիստ չի մոտենում այս հարցին, այլեւ դրա 19-րդ հոդվածը թվարկում է վերապահում անելու անհնարինության դեպքերի սպառիչ ցանկը՝ երբ վերապահումն արգելվում է պայմանագրով կամ պայմանագիրը նախատեսում է, որ կարելի է անել միայն որոշակի վերապահումներ, որոնց թվի մեջ տվյալ վերապահումը չի մտնում, ինչպես նաեւ այն դեպքում, երբ վերապահումն անհամատեղելի է պայմանագրի առարկայի եւ նպատակների հետ։ Մնացած դեպքերում վերապահում անելու իրավունքը ըստ էության պետության ներքին իրավասության խնդիր է։ Մյուս կողմից «Միջազգային պայմանագրերի մասինե ՀՀ գործող օրենքի 19-րդ հոդվածը նախատեսում է նախքան պայմանագրի ստորագրումը դրա վերաբերյալ վերապահում անելու իրավունքը, իսկ օրինակ վավերացման կամ հաստատման փուլում այն չի կարեւորում։ Մինչդեռ գործնականում լինում են դեպքեր, երբ այդպիսի վերապահում անելու անհրաժեշտություն է առաջանում հենց հաստատման կամ վավերացման ժամանակ՝ պայմանավորված տարբեր պատճառներով։ Ի դեպ այս մասին են վկայում նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ վերջինիս տարեկան հաղորդումները։ Մասնավորապես, երբ պայմանագրերի մշակման, կազմման, ինչպես նաեւ դրանց ստորագրումից հետո հայտնի են դառնում, որ դրանցում ամրագրված նորմերը ոչ միայն չեն բավարարում իրավական որոշակիության կանոններին, այլեւ հնարավոր է ստեղծվեն հակասահմանադրական իրավիճակներ (օրինակ՝ երբ միջազգային պայմանագրից բխող գործողություններ են ձեռնարկվում, որոնք ըստ էության չեն համապատասխանում ՀՀ սահմանադրության դրույթներին, ինչպես նաեւ սահմանադրական դատարանի արտահատած իրավական դիրքորոշումներին)։ Սա այն դեպքում, երբ ինչպես նշված է ՀՀ Սահմանադրական դատարանի 2009թ. տարեկան հաղորդուման մեջ. «Պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք դեռեւս բավարար չափով հաշվի չեն առնում սահմանադրական դատա՝րանի որոշումների պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են եւ իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանու՝թյուն։ Մինչդեռ միջազգային սահմանադրական արդարադատության պրակտիկան միարժեքորեն վկայում է, որ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով ձեւակերպում է իր իրավական

դիրքորոշումը, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար։ե։

Բացի այդ, վերապահման ինստիտուտը կարեւորվում է նաեւ գործողության մեջ մտած միջազգային պայմանագրի կատարման ընթացքում, այն մեկնաբանելիս, ինչպես նաեւ պայմանագրի մյուս կողմին (կողմերին) կամ որեւէ երրոդ կողմի հստակորեն ցույց տալու ՀՀ մտադրության մասին։ Սա վկայութում է նաեւ երկրի միջազգային հեղինակության, ինչպես նաեւ միջազգային իրավունքի նորմերը հարգելու մասին։

3. միջազգային պայմանագրի վավերացման ժամանակ վերապահում սահմանելու իրավունքը ընձեռել ինչպես Հանրապետության Նախագահին, այնպես էլ ՀՀ Ազգային ժողովին։ Այս խնդիրը կաեւոր է նույն իշխանության մարմինների միջեւ լիազորությունների տարանջատման, հավասարակշռման եւ փոխադարձ զսպման սկզբունքի լիարժեք գործադրման համար։ Գործող օրենսդրությամբ այդպիսի իրավունքը տրված չէ ՀՀ ԱԺ-ին, ինչը առնվազը թուլացնում է օրենսդիր մարմնի դերակատարությունը երկրի կարեւորագույն հարցերում մասնակցություն ունենալու, ինչպես նաեւ արտաքին քաղաքականությանը առավել ճկունություն հաղորդելու սահմանադրական լիազորությունների իրագործումը։ Մյուս կողմից, եթե գործող օրենսդրության համաձայն. նույնիսկ տեսականորեն ՀՀ ԱԺ-ն ցանկություն արտահայտի ՀՀ Նախագահի կողմից ներկայացված միջազգային պայմանագրի վավերացման ժամանակ արտահատել դիրքորոշում՝ այն չվավերացնելու կամ որոշ վերապահումներով վավերացնելու ձեւով, ապա այն կարող է արտահատվել միայն միջազգային պայմանգրի վավերացումը մերժելու միջոցով։ Սա ոչ միայն նշանակում է սկզբից սկսել պայմանագրային հարաբերությունների գործընթացը, այլեւ ձեւավորում է կոնֆլիկտային իրավիճակ երկրի ներսում, հետեւաբար նաեւ թուլացնում է ՀՀ միջազգային դիրքրեը։ Մինչդեռ, եթե ՀՀ ԱԺ-ի համար վերականգնվի վերապահում սահմանելու իրավունքը, ապա այդպիսի հակադրության անհրաժեշտություն չի առաջանա եւ ՀՀ արտաքին քաղաքականությունը կլինի առավել նպատակային, ճկուն ու կնպաստի ՀՀ սահմանդրությամբ ամրագրված նորմերի առավել լիարժեք գործադրմանը։

Այսպիսիով, առաջարկվող փոփոխությունները կրում են համակարգային բնույթ եւ նպատակ ունեն ապահովել ՀՀ Սահմանադրական դատարանի 2010թ. հունվարի 12-ի ՍԴՈ-850 որոշմամբ նախատեսված պահանջների մի մասի կատարմանը։ Այն է՝ Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվող քայլերը՝ նախատեսվող պարտավորությունների ստանձնման եւ դրանց կատարումն անհրաժեշտ օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքներով ապահովելու ուղղությամբ, պետք է ներդաշնակ լինեն որոշմամբ ներկայացվող Սահմանադրական դատարանի իրավական դիրքրոշումներին եւ Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին։ Իսկ ինչպես ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասինե ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասում. Սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 28. Միջազգային պայմանագիրը վավերացնելը և հաստատելը

1. Հայկական կողմի ստորագրած միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը վավերացնում է «Ազգային ժողովի կանոնակարգե օրենքով սահմանված կարգով։

Ազգային ժողովում տվյալ միջազգային պայմանագիրը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ սահմանված կարգով նշանակված պաշտոնական ներկայացուցիչը։

2. Հայկական կողմի ստորագրած միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության Նախագահը հաստատում է Հանրապետության Նախագահի աշխատակազմի գործավարական կանոններով սահմանված կարգով։

Միջազգային պայմանագրի հաստատման մասին Հայաստանի Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագիր։

3. Եթե միջազգային պայմանագիրը վավերացման կամ հաստատման է ներկայացվել դրա վերաբերյալ հայկական կողմի վերապահում, հայտարարություն, այդ պայմանագրի մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ հայկական կողմից առարկություն անելու առաջարկությամբ, և դա վավերացնող կամ հաստատող մարմնի կողմից ընդունվել է, ապա տվյալ միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման մասին ակտում նշվում է այն վերապահումով, հայտարարությունով կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ հայկական կողմի առարկությունով վավերացնելու կամ հաստատելու մասին։

4. Վավերացման փուլում միջազգային պայմանագրի վերաբերյալ վերապահումը եւ (կամ) հայտարարությունը սահմանում են Հայաստանի Հանրապետության Նախագահը կամ Ազգային ժողովը։

«*Հոդված 31.1 Մինչեւ ուժի մեջ մտնելը միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից չեղյալ հայտարարելը*

1. Մինչեւ ուժի մեջ մտնելը միջազգային պայմանագիրը, դրա կնքման ցանկացած փուլում Հայաստանի Հանրապետության կողմից կարող է միակողմանիորեն չեղյալ հայտարարվել, եթե պայմանգրի մյուս կողմն հայտարարում է այնպիսի նախապայմանների մասին կամ ձեռնարկում է այնպիսի գործողություններ, որոնք անհամատեղելի են պայմանագրի առարկայի եւ նպատակների հետ կամ այդպիսին կդառնան հետագայում, կատարել է խարդախություն, կաշառել է Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին, ուժի կամ դրա կիրառման սպառնալիքի միջոցով գործադրել է հարկադրանք կամ անհիմն խախտել է պայմանագրի կնքման ընթացակարգերին առնչվող ժամկետները։

2. Մինչեւ ուժի մեջ մտնելը միջազգային պայմանագիրը, դրա կնքման ցանկացած փուլում Հայաստանի Հանրապետության կողմից կարող է միակողմանիորեն չեղյալ հայտարարվել նաեւ, եթե այն կնքելու ընթացքում չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության սահմանադրության եւ սույն օրենքի պահանջները։

3. Մինչեւ ուժի մեջ մտնելը միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից չեղյալ են ճանաչում սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված մարմիններրը։

Հոդված 42. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի վերաբերյա վերապահում, հայտարարություն կամ պայմանագրի մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկություն անելը

1. Սույն օրենքով սահմանված կարգով միջազգային պայմանագիրն ստորագրելու ժամանակ, պայմանագիրը վավերացնելու կամ հաստատելու պահին, ինչպես նաև տվյալ միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտնելուց հետո հայկական կողմը

կարող է դրա վերաբերյալ կատարել վերապահում, հայտարարություն, պայմանագիրն արդեն իսկ ստորագրած մյուս կողմի արած վերապահման, հայտարարության դեմ առարկություն և հանել դրանք լրիվ կամ մասնակիորեն՝ տվյալ միջազգային պայմանագրով և միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով։

Միջազգային պայմանագրի վերաբերյալ հայկական կողմը վերապահում չի կարող անել միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դեպքերում։

2. ~~Այն դեպքում, երբ երկկողմ միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման պահին հայկական կողմը պարզում է, որ մյուս կողմը կատարել է այնպիսի վերապահում կամ հայտարարություն, որը, ըստ միջազգային իրավունքի նորմերի, չպետք է արվեր, հայկական կողմը նման միջազգային պայմանագիրը կարող է վավերացնել կամ հաստատել նման վերապահման կամ հայտարարության դեմ առարկումով։~~

~~Եթե վերոնշյալ ձևով վավերացնելը կամ հաստատելը ըստ էության անհամատեղելի է պայմանագրի առարկայի և նպատակների հետ, ապա հայկական կողմը այդ պայմանագիրը կարող է վավերացնել կամ հաստատել միայն այն դեպքում, երբ մյուս կողմը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, հանել է նման վերապահումը կամ հայտարարությունը։~~

Հայկական կողմը միջազգային պայմանագիրը վավերացնում կամ հաստատում է վերապահումով (հայտարարությամբ), եթե

1) մինչեւ երկկողմ միջազգային պայմանագրի վավերացումը կամ հաստատումը մյուս կողմը կատարել է այնպիսի վերապահում կամ հայտարարություն, որը հակասում է միջազգային իրավունքի նորմերին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը կամ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշմանը,

2) դրանում ամրագրված դրույթները ձեւակերպված են ոչ պարզ, ոչ հստակ եւ ոչ մատչելի լեզվով, օգտագործված են հնացած, բազմիմաստ բառեր, արտահայտություններ, պատկերավոր համեմատություններ, այլաբանություններ, չափազանցություններ, փոխաբերական իմաստով բառեր կամ արտահայտություններ, որոնք պայմանագրի մյուս կողմի համար տվյալ պահին կամ հետագայում կարող են դառնալ պայմանագրի իրական առարկային կամ նպատակներին ուղակիորեն չվերաբերող մեկնաբանման կամ այդպիսի մեկնաբանմամբ պայմանագրի կիրառման հիմք,

3) իրավական նորմի որոշակիության եւ միջազգային իրավունքին համապատասխան մեկնաբանության ապահովման համար անհրաժեշտ է հստակեցնել պայմանագրի առարկան եւ նպատակը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները,

4) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվող քայլերը պետք է ներդաշնակ լինեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշմանը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին։

Սույն մասի առաջին կետում նշված դեպքում հայկական կողմը կարող է վերապահումը ձեւակերպել որպես մյուս կողմի վերապահման կամ հայտարարության դեմ առարկություն։ Եթե այս ձեւով վավերացնելը կամ հաստատելը ըստ էության անհամատեղելի է պայմանագրի առարկայի եւ նպատակների հետ, ապա հայկական կողմը այդ պայմանագիրը կարող է վավերացնել կամ հաստատել միայն այն դեպքում, երբ մյուս կողմը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, հանել է նման վերապահումը կամ հայտարարությունը։

3. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի վերաբերյալ վերապահում, հայտարարություն կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկություն անելու անհրաժեշտությունն առաջացել է այդ պայմանագիրը սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո, ապա դա կարող է արվել արտաքին գործերի նախարարության առաջարկությամբ՝ իրավասու գերատեսչությանն այդ մասին գրավոր հայտնելու միջոցով կամ իրավասու գերատեսչության նախաձեռնությամբ։

Առաջարկությունն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, ինչպես նաև սեփական նախաձեռնություն դրսևորելիս իրավասու գերատեսչությունը կազմում է տվյալ միջազգային պայմանագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից վերապահում, հայտարարություն կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկություն անելու փաստաթղթի նախագիծը, կամ ձևակերպում է նման փաստաթղթի վերաբերյալ իր կարծիքը, եթե արտաքին գործերի նախարարությունն իր առաջարկությանը կցել է այդպիսի նախագիծ, և ներկայացնում շահագրգիռ գերատեսչությունների կարծիքին։

Շահագրգիռ գերատեսչությունները 5-օրյա ժամկետում իրավասու գերատեսչություն են ներկայացնում կարծիք վերապահում, հայտարարություն կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկություն անելու նպատակահարմարության կամ աննպատակահարմարության վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում՝ նաև առաջարկություններ և դիտողություններ համապատասխան փաստաթղթի նախագծի վերաբերյալ։

Շահագրգիռ գերատեսչությունների կարծիքները ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, իրավասու գերատեսչությունը կազմում է կարծիք՝ հիմնավորելով իր այն անհամաձայնությունները, որոնք առնչվում են շահագրգիռ գերատեսչությունների կարծիքներին և դրանք ներկայացնում է արտաքին գործերի նախարարություն։

Փաստաթղթերն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, արտաքին գործերի նախարարությունը դրանց պատճենները՝ իր եզրակացությամբ, ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն։

4. Արտաքին գործերի նախարարությունից փաստաթղթերը ստանալով՝ ուժի մեջ մտած միջազգային պայմանագրի վերաբերյալ վերապահում, հայտարարություն, մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկություն անելու կամ այն մերժելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր դիրքորոշումն արտահայտում է որոշում ընդունելով, որն ուղարկում է արտաքին գործերի նախարարություն։

Արտաքին գործերի նախարարությունը, ստանալով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, 15-օրյա ժամկետում դրանց վերաբերյալ փաստաթղթերն իր եզրակացության հետ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին։

5. Միջազգային պայմանագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից հայտարարություն, վերապահում կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկություն անելու առաջարկությանը համաձայնվելու դեպքում Հայաստանի Հանրապետության Նախագահը հրամանագիր է հրապարակում իր հաստատած միջազգային պայմանագրի վերաբերյալ վերապահում, հայտարարություն կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկություն անելու մասին։

Վավերացված միջազգային պայմանագրի դեպքում Հանրապետության Նախագահը սահմանված կարգով դիմում է Ազգային ժողով՝ համապատասխան միջազգային պայմանագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից վերապահում, հայտարարություն կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկություն անելու հարցով՝ նշանակելով Ազգային ժողովում այդ հարցը ներկայացնելու համար իր պաշտոնական ներկայացուցչին։

6. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի վերաբերյալ հայկական կողմի արած վերապահումը, հայտարարությունը կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկությունը հանելու նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված ընթացակարգերը։

7. Միջգերատեսչական միջազգային պայմանագրի վերաբերյալ հայկական կողմի վերապահումը, հայտարարությունը կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ հայկական կողմի առարկությունը կատարվում են, կամ դրանք հանվում են իրավասու գերատեսչության նախաձեռնությամբ և արտաքին գործերի նախարարության համաձայնությամբ՝ առանց սույն հոդվածով նախատեսված ընթացակարգերի իրականացման։

Իրավասու գերատեսչության հիմնավորումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, արտաքին գործերի նախարարությունն իր կարծիքի հետ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին։

Հայկական կողմի վերապահմանը, հայտարարությանը կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ հայկական կողմի առարկությանը կամ դրանց հանելուն համաձայնվելու դեպքում Հայաստանի Հանրապետության Նախագահը ստորագրում է համապատասխան հրամանագիր։

8. Միջազգային պայմանագրի վերաբերյալ վերապահում, հայտարարություն կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկություն անելու կամ դրանք հանելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշման կամ Հանրապետության Նախագահի հրամանագրի ընդունումից հետո համապատասխան վերապահման, հայտարարության կամ մյուս կողմի վերապահման, հայտարարության դեմ առարկության տեքստը կամ դրանք հանելու մասին ծանուցումը արտաքին գործերի նախարարությունը տվյալ միջազգային պայմանագրով սահմանված կարգով ներկայացնում է այդ պայմանագրի մյուս կողմին կամ բազմակողմ միջազգային պայմանագրի ավանդապահին։

9. Հայկական կողմը չպետք է հայտարարություն անի Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի վերաբերյալ իր վերապահումը կամ հայտարարությունը հանելու մասին, որն արվել է սույն օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 38-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան, քանի դեռ տվյալ միջազգային պայմանագրով սահմանված կարգով դրանից չեն հանվել այն դրույթները, որոնց վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասելու կապակցությամբ հայկական կողմը համապատասխան վերապահում կամ հայտարարություն է արել։

Հոդված 57. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությ կասեցնելը

1. Սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է կասեցվել այդ պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով կամ ցանկացած ժամանակ՝ այդ պայմանագրի բոլոր մասնակիցների համաձայնությամբ, տվյալ պայմանագրի կողմ հանդիսացող միջազգային իրավունքի այլ սուբյեկտների հետ խորհրդակցելուց հետո, ինչպես նաև միջազգային իրավունքի նորմերով նախատեսված այլ դեպքերում։

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է կասեցվել նաև, եթե՝

1) պատերազմական կամ ռազմական դրության, տնտեսական կամ այլ շրջափակման կամ երկրաշարժի, բնական այլ աղետի կամ անհաղթահարելի այլ ուժի կամ օբյեկտիվ այլ պատճառների բերումով Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն չունի ժամանակին կամ պատշաճ կերպով կատարելու ստանձնած պարտավորությունները.

2) միջազգային պայմանագրի մյուս կողմը էականորեն խախտում է այդ պայմանագրով ստանձնած պարտավորությունները և վտանգում պայմանագրի կատարումը.

3) միջազգային պայմանագրի մյուս կողմը կասեցրել է այդ պայմանագրի գործողությունը։

«4) միջազգային պայմանագրի գործողության ընթացքում ի հայտ են եկել սույն օրենքի 31.1 հոդվածով նախատեսված համապատասխան հիմքերը։ե

Սույն մասի ~~2-րդ և 3-րդ~~ 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված դեպքերում բազմակողմ միջազգային պայմանագրի գործողությունը Հայաստանի Հանրապետությունը կարող է չկասեցնել այն կողմի համար, որը պատշաճ կերպով կատարում է դրանով ստանձնած իր պարտականությունները և Հայաստանի Հանրապետության նկատմամբ չի կասեցրել այդ պայմանագրի գործողությունը։

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված միջազգային պայմանագրի գործողությունը կասեցվում է Հայաստանի Հանրապետության կողմից պայմանագրի մյուս կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելու միջոցով։

Անհրաժեշտության դեպքում մինչև կասեցումը հայկական կողմը դիվանագիտական ուղիներով դրա վերաբերյալ կարող է ստանալ տվյալ միջազգային պայմանագրի մյուս կողմի գրավոր համաձայնությունը։

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողության կասեցումն սկսվում է այդ մասին պայմանագրի մյուս կողմին կամ բազմակողմ միջազգային պայմանագրի ավանդապահին դիվանագիտական ուղիներով ծանուցելու պահից, իսկ եթե կասեցման համար հայցվել է մյուս կողմի համաձայնությունը՝ այդ համաձայնությունը դիվանագիտական ուղիներով ստանալու պահից կամ կասեցման մասին Ազգային ժողովի որոշմամբ կամ Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված պահից։

4. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կասեցնելու համար հիմք դարձած հանգամանքի կամ հանգամանքների վերացումից հետո այդ պայմանագրի գործողությունը վերսկսվում է, որի մասին արտաքին գործերի նախարարությունը ծանուցում է մյուս կողմին կամ բազմակողմ միջազգային պայմանագրի ավանդապահին։

Հոդված 58. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությ դադարեցնելը

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել այդ պայմանագրով սահմանված կարգով և այն պահից, երբ՝

1) որոշակի ժամկետով կնքված միջազգային պայմանագրի գործողության ժամկետը լրացել է, և կողմերը այդ պայմանագրով սահմանված կարգով չեն երկարաձգել այդ ժամկետը կամ թեկուզև երկարաձգել են, սակայն Հայաստանի Հանրապետությունը չի մասնակցել կամ միացել այդ երկարաձգմանը.

2) անորոշ ժամկետով կնքված միջազգային պայմանագիրը դրանով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունը չեղյալ է հայտարարել, կամ չեղյալ հայտարարելու մասին հայկական կողմին ծանուցել է այդ պայմանագրի մյուս կողմը, և համապատասխան ծանուցման պահից հետո պայմանագրով նախատեսված ժամկետը լրացել է.

3) բազմակողմ միջազգային պայմանագրով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունը դուրս է եկել այդ պայմանագրից, այդ թվում՝ այդ պայմանագիրը չեղյալ հայտարարելու միջոցով։

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել նաև պայմանագրի մյուս կողմի՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի վերացմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ սուբյեկտին փոխարինել է միջազգային իրավունքի մեկ այլ սուբյեկտ, որը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, իրեն հայտարարել է կամ ճանաչել է վերացված սուբյեկտի իրավահաջորդը։

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել նաև այն դեպքում, երբ այդ պայմանագրով կարգավորվող միևնույն հարցերով նոր (հաջորդական) պայմանագիր է կնքվում Հայաստանի Հանրապետության և համապատասխան միջազգային պայմանագրի օտարերկրյա սուբյեկտի միջև, և ուժը կորցրած է ճանաչվում նախորդ միջազգային պայմանագիրը։

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել նաև, եթե պայմանագրի մյուս կողմ հանդիսացող սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված կազմակերպության կամ միավորման նկատմամբ լուծարման գործընթաց է սկսվել, կամ տվյալ կազմակերպությունը կամ միավորումը լուծարվել է։

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել նաեւ, եթե ողջամիտ ժամկետում չեն վերացել միջազգային պայմանագրի կասեցման հիմքերը։»

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հոդված 93. Միջազգային պայմանագրերի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու մասին որոշումների ընդունման կարգը

1. Միջազգային պայմանագիրն Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացվում, եթե դա կամ դրանում ամրագրված պարտավորությունները սահմանադրական դատարանի որոշմամբ չեն հակասում Սահմանադրությանը։

2. Ազգային ժողովի վավերացմանը ենթակա միջազգային պայմանագրերի շրջանակը սահմանվում է Սահմանադրությամբ և օրենքով։

3. Եթե վավերացման ներկայացված միջազգային պայմանագրի կիրառումը նախատեսում է Հայաստանի Հանրապետության օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում, ապա կառավարությունը պայմանագրին կից ներկայացնում է տեղեկանք այդ մասին։

Եթե վավերացման ներկայացված միջազգային պայմանագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության օրենքներին հակասող նորմեր, ապա կառավարությունը պայմանագրին կից ներկայացնում է տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության կամ աննպատակահարմարության մասին։

4. Ազգային ժողովում միջազգային պայմանագրերի վավերացման, կասեցման մասին որոշման նախագիծը քննարկվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով։ Հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս Հանրապետության Նախագահի ներկայացուցիչը։

5. ~~Միջազգային պայմանագիրը կարող է վավերացման ներկայացվել նաև հիմնական զեկուցողի կողմից սահմանված վերապահումներով։~~

«Միջազգային պայմանագիրը կարող է վավերացվել Հանրապետության նախագահի կամ Ազգային Ժողովի կողմից սահմանված վերապահումով եւ (կամ) հայտարարությամբ։»

6. Սույն հոդվածով սահմանված կարգը տարածվում է նաև միջազգային պայմանագրերին Հայաստանի Հանրապետության միանալու մասին որոշում ընդունելու վրա։

7. Եթե որոշում է ընդունվում միջազգային պայմանագիրը վավերացնելու մասին և, համաձայն կառավարության տեղեկանքի (տեղեկանքների), համապատասխան պայմանագրից բխում է, որ պետք է ընդունվի նոր օրենք, կամ փոփոխություններ կատարվեն գործող օրենքում, ապա կառավարությունը «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում համապատասխան օրենքում փոփոխություններ կատարելու կամ նոր օրենք ընդունելու մասին նախագիծը (նախագծերը)։

8. Ազգային ժողովի վավերացրած միջազգային պայմանագիրը կամ այն միջազգային պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին որոշման նախագիծը, որին միանալու որոշումն ընդունել է Ազգային ժողովը, կառավարության կողմից Ազգային ժողով է ներկայացվում չեղյալ հայտարարելը հիմնավորող տեղեկանքով։

Միջազգային պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին որոշման նախագծի ներկայացման և քննարկման նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 4-րդ կետի կանոնները։

(Վերնագիրը խմբ. 22.02.07 ՀՕ-124-Ն, լրաց. 26.02.07 ՀՕ-111-Ն)

(93-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 22.02.07 ՀՕ-124-Ն, լրաց., փոփ. 26.02.07 ՀՕ-111-Ն)